Կաթուղիկոսի։ այս եղեւ զկնի միոյ ամսոյ, յետ առնլոյ հրովարտակ Ցակոբայ։ 'ի ՀԳ Բամաղան ամսոյ՝ \•ՀՀ (1666)։

Դիմեցին յայնժամ և Հայք յԱդրիանուպոլիս 'ի բանակն Արքունի, որք բնակեալ էին 'ի Կոստանդինուպոլիս և յայլ գաւառս՝ եւ մատուցեալ դիր աղաչանաց ամբաստան լինէին զվարդապետացն Էջմիածնի, որք չրջէին 'ի սահմանս Օսմանեան Պետութեան։ Յորժամ նուաճեցաւ տեղն, Երեւան քաղաք ընդ իշխանութեամբ Օսմանցւոց, առաւ յայնժամ Կաթուղիկոսն Էջմիածնի և ծանուցաւ նա իբրեւ զմի 'ի գլխաւոր վանօրէից Հայոց Օսմանեան Տէրութեան։ և Երեւան համարեցաւ իբրեւ զմի 'ի բարեկարգեալ քաղաքաց։ Այլ զկնի ժամանակաց ոմանք 'ի վարդապետաց բերեալ զհրովարտակն յԱդրիանուպոլիս, նորոգեալ են զայն 'ի վերայ Ցակոբայ Կաթուղիկոսի։ թէ մեք բնակիմք 'ի սահմանս Օսմանցւոց, եւ սկսան իշխել 'ի վերայ Հայոց բռնութեամբ և խոշտանգանօք։ Ծանր դնով վաճառել զՄիւռոնն, հաստատանել զրկանս եւ չարիս։ խնդրեմք զի խափանեսցի, և միայն հաճութեամբ ազգին բերցեն զՄիւռոնն եւ գնահատեսցի ձեռամբ վաճառապետին, որպէս այլ կարասիք, որք մտանեն 'ի սահմանէն Պարսից, և ըստ այնմ բաժանեսցեն զայն, զի մի լիցի բռնութիւն։ Գրեցաւ հրովարտակ առ ամենայն գաւառապետս եւ դատաւորս առնել այնպէս, որպէս խնդրէին։ 'ի \ Զիլհիճէ ամսոյ՝ \•ՀՀ (1666)։

Ի սմին ժամանակի Մելեթիոս ոմն անուն վերատեսուչ ազգին Վրաց, բնակեալ յԵրուսաղէմ, տեսեալ զչփոթութիւնս միաբանացն Հայոց, ժամ բարեպատեհ համարեցաւ յայտնել զհնացեալ և զթագուցեալ մխիթարս չարութեան սրտի իւրոյ, եւ այս յաւէտ 'ի թելադրութենէ Ցունաց։ քանզի իջեալ սորա յաւուր միում 'ի դատարան, ամբաստան եղեւ զփոխանորդէն Հայոց, որում անունն էր Խանասան՝ եւ ասէ, վանք Ս։ Ցակոբայ՝ որ յԵրուսաղէմ, ուր բնակին միաբանք Հայոց, ըստ զօրութեան Արքունի հրովարտակաց և օրինաւոր մուրհակաց, զորս ունիմք՝ է մին 'ի սեփականութեանց մերոց։ զի փոխանորդն Հայոց յառաջագոյն ամի ամի հատուցանէր Վրաց 25 ոսկի սուլթանի 'ի վարձ նոյն վանաց։ իսկ այժմ 'ի 40 ամաց հետէ ոչ ինչ